

Ազատ Կ. Եղիազարյան
Բանաս. գիյր. դոկտոր

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԱՋՐ. ԼԵՐՄՈՆՏՈՎ – ԻՍԱՀԱԿՅԱՆ – ԱԼ. ԲԼՈԿ

Գրականագիտական էտյուդ*

Բանալի բառեր– Իսահակյան, Լերմոնտով, Բլոկ, թարգմանություն, ազատ թարգմանություն, փոխադրություն, հայկական պոեզիա, ռուսական պոեզիա, ռոմանտիզմ, մահ, երազ:

1. Իսահակյանի և Լերմոնտովի բանաստեղծությունները

Հայոց ազատագրական պայքարին նվիրված Ավետիք Իսահակյանի ամենահուզիչ բանաստեղծություններից մեկը սկսվում է «Սալնո ձորերում, կռվի ձորերում» տողով: Ով ծանոթ է Միխայիլ Լերմոնտովի «Երազ» (Сон) բանաստեղծությանը, չի կարող չնկատել երկու բանաստեղծությունների նմանությունը: Այդ նմանությունը տեսնելը և քննելը ոչ միայն շատ հրապուրիչ զբաղմունք է գրականագետի համար, այլև օգտակար՝ երկու բանաստեղծների արվեստն ու աշխարհընկալումը հասկանալու համար: Փորձենք ցույց տալ այդ նմանությունները, որոնց ֆոնին տարբերություններն ավելի հստակ կերևան: Բայց նախ հիշենք երկու բանաստեղծությունները.

**Սալնո ձորերում, կռվի ձորերում
Հայդուկն է ընկել խոր վերքը սրտին, –
Վերքը վարդի պես բացված կարմրուն,
Ու ձեռքն է գցել կոտրած հրացանին:
Արնոտ դաշտերում ծղրիդն է ծղրում,
Հայդուկն է ընկել մահվան խոր քնով,
Հայդուկը հոգում երազ է տեսնում, –
Հայրենի աշխարհն ազատ, ապահով...
Տեսնում է... արտում հովն է շնկշնկում,
Փայլուն գերանդին զնգում է անուշ,**

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.01.2019:

Ու փոցխ են քաշում սիրուն աղջկունք՝
 Հայդուկի վրա երգելով անո՛ւշ...
 Սալնո ձորերում ամպերն են անցնում,
 Հայդուկի վրա արծիվն է գալիս,
 Ա՛խ, սև աչերը արծիվն է հանում,
 Հայդուկի վրա ամպերն են լալիս...
 Ավ. Իսահակյան¹

СОН

В полдневный жар в долине Дагестана
 С свинцом в груди лежал недвижим я;
 Глубокая еще дымилась рана,
 По капле кровь точилась моя.
 Лежал один я на песке долины;
 Уступы скал теснились кругом,
 И солнце жгло их желтые вершины
 И жгло меня – но спал я мертвым сном.
 И снился мне сияющий огнями
 Вечерный пир в родимой стороне.
 Меж юных жен, увенчанных цветами,
 Шел разговор веселый обо мне.
 Но в разговор веселый не вступая,
 Сидела там задумчиво одна,
 И в грустный сон душе ее младая
 Бог знает чем была погружена;
 И снилась ей долина Дагестана:
 Знакомый труп лежал в долине той;
 В его груди дымясь чернела рана,
 И кровь лилась хладеющей струей².

М. Лермонтов

Դժվար չէ նկատել, որ Իսահակյանի բանաստեղծությունն իրականում Լերմոնտովի բանաստեղծության փոխադրությունն է: Բանաստեղծության փոխադրությունը (ազատ թարգմանություն, վերաշարադրանք) հազվագյուտ բան չէ պոեզիայի պատմության մեջ, մանավանդ 19-րդ դարում: Այդպիսի դեպքերում փոխադրողները երբեմն չէին էլ հիշում բնագրի հեղինակի անունը: Հենց Իսահակյանի ստեղծագործության մեջ այսպիսի փոխադրություններ շատ կարելի է գտնել: Հիշենք ժամանակին խոսքուգրույցի առարկա դարձած «Պանդուխտ որդին», որը գերմանական ժողովրդական երգի փոխադրություն է, և շոտլանդական բանաստեղծ Ռոբերտ Բրոնսի «Իմ սիրտը լեռներում է» հոջակավոր բանաստեղծության մոտիվներով գրված՝ «Իմ սիրտն այնտեղ է, հայրենի հզոր Լեռների գրլխին, արծիվների մոտ...» բանաստեղծությունները: Անկախ փոխադրություն լինելու հանգա-

1 Իսահակյան Ավետիք, Երկերի լիակատար ժողովածու, «Գիտություն» հրատ., Եր., 2003, էջ 232:

2 Лермонтов М. Ю., Собрание сочинений в четырех томах, том первый, «Наука», Ленинград, 1979, с. 477.

մանքից, այդ գործերը պատվավոր տեղ գրավեցին և Իսահակյանի ստեղծագործության մեջ, և՛ հայ պոեզիայում:

Ներկա դեպքում շատ կարևոր է, որ և՛ Իսահակյանը, և՛ Լերմոնտովը դավանում էին ռոմանտիկական բանաստեղծության սկզբունքները: Երկու բանաստեղծների գործերի հանգամանալից համեմատական քննությունը շատ հետաքրքրական իրողություններ կբացահայտեր այս ուղղությամբ: Իսահակյանը կարդացել, սիրել, նաև թարգմանել է Լերմոնտովին³: Բայց այս փոխադրությունը, թերևս, ամենաբնութագրականն է երկու մեծ բանաստեղծների ստեղծագործական առնչություններում: Լերմոնտովի բանաստեղծության մեջ Իսահակյանին հոգեհարազատ շատ բան կար: Օտարության մեջ զոհված գինվորի պատմությունը նրա մեջ պետք է ծներ բազմաթիվ զուգորդումներ Հայոց պատմության, հայ ազատամարտիկների կյանքի ու մահվան մասին:

Մանավանդ մահվան ու երազի այդ զուգակցությունը, որը կա Լերմոնտովի բանաստեղծության մեջ, մի կողմից բնորոշ է ռոմանտիկական պոեզիային, մյուս կողմից՝ շատ մոտ է Իսահակյանի ապրումներին: Երկու բանաստեղծների ժառանգության մեջ բազմաթիվ գործեր կան այս երկու մոտիվների զուգակցմամբ: Ռուս գրականագետները Լերմոնտովի ստեղծագործության կապակցությամբ այս մասին շատ են գրել⁴: Նույն օրինաչափությունն ակնհայտ է նաև Իսահակյանի պոեզիայում⁵: Ահա մի օրինակ Իսահակյանի պոեզիայից.

**Երազիս տեսա, որ ծովի ափին
ես ընկած էի խոր վերքը սրտիս.
Եվ ալիքները մեղմ ծփում էին՝
Անուշ օրորով ինձ անդորր տալիս:
Երազիս տեսա, որ ընկերներս
Ուրախ երգելով անցան ծովափով.
Սակայն... ոչ մեկը ինձ ձայն չտվեց,
Իսկ ես լուռ էի մահվան խոր վշտով...⁶**

Ընթերցողը չի կարող չնկատել այս բանաստեղծության հուզական մթնոլորտի նմանությունը մեզ հետաքրքրող բանաստեղծությանը՝ երազը, խոր վերքը, մահվան խոր վիշտը: Եվ այդ մթնոլորտը, և՛ պատկերային ողջ համակարգը Իսահակյանի արվեստի կարևորագույն տարրերն են: Դրեք կողք-կողքի այս և Սալոմ ձորերում զոհված հայդուկի մասին բանաստեղծությունները, և նմանություններն անմիջապես տեսանելի են դառնում: Այս, ինչպես և Իսահակյանի այլ բանաստեղծություններ առավել ակնհայտ են դարձնում նրա և Լերմոնտովի բանաստեղծական աշխարհների ընդհանուր գծերը:

Շատ կարևոր է տեսնել երկու բանաստեղծությունների ևս մի ընդհանրությունը, մի գիծ, որը գերազանցապես ռոմանտիկական բանաստեղծությանն էր հատուկ: Զգացմունքների ծայրաստիճան լարման մեջ ռոման-

3 Փաստերը տես **Իսահակյան Ավիկ**, Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը, Եր., 1984, էջեր 212-218:

4 Մանրամասն տես «Лермонтовская энциклопедия», М., 1981, էջ 522:

5 Այս մասին տես **Իսահակյան Ավիկ**, Իսահակյանը և ռուս գրականությունը, էջեր 229-234:

6 **Իսահակյան Ավետիք**, ԵԼԺ, հատ. 1, էջ 249:

հայարտությամբ: Բայց ռուս բանաստեղծի համար հայրենի աշխարհի ազատության և ապահովության թեման ամենևին այդքան հրատապ չէր հասկանալի պատճառով՝ Ռուսաստանն անկախ և ուժեղ պետություն էր (թեև այլ գործերում Լերմոնտովը շատ մոայլ է գնահատում իր երկրի ներքին վիճակը): Եվ միանգամայն հասկանալի է, թե ինչու է նրա հերոսը երազում տեսնում աշխարհիկ խնջույքը և այդ խնջույքում թախծող աղջկան: Կարծում ենք, արժե հատուկ ուշադրություն դարձնել առաջին դեմքին՝ ամբողջ բանաստեղծության մեջ զոհված զինվորականն է առաջին դեմքով պատմում իր զոհվելու մասին: Սա անձնականության դրսևորումներից մեկն է, այնքան բնորոշ ժամանակակյան պոեզիային: Բանաստեղծության հերոսը շատ մոտ է Լերմոնտովին, գրեթե նույնանուն է նրա հետ – նա էլ կարող էր Կովկասում զոհվել իր հերոսի պես: Վերջապես, զոհվածի երազում ներկայացված է ազնվականական այն շրջանակը, որին պատկանում էր ինքը՝ Լերմոնտովը:

Իսկ ահա հայդուկի երազում մենք տեսնում ենք մի հույժ հայկական տեսարան՝ խոտհունձը, գեղջուկ աղջիկների փոցիս անելը: Սա Իսահակյանի հերոսի հայրենիքն է, գյուղական կյանքը, որն այնքան սիրել է Իսահակյանը: Աղջիկները երգում են զոհված հայդուկի մասին: Իսահակյանի հերոսի երազն անձնական ոչինչ չունի: Այնինչ Լերմոնտովը զարգացնում է անձնական ողբերգության մոտիվը, և դրա համար այդ աղջկա կերպարն այստեղ այդքան կարևոր է: Լերմոնտովն ակնարկում է իր զոհված զինվորի սերը:

Այս մանրամասնում կա և մի ուրիշ երանգ, որը ստիպում է նորից դառնալ Իսահակյան–Լերմոնտով ընդհանրությունների և տարբերությունների միահյուսմանը: Լերմոնտովի բանաստեղծության մեջ խնդիրը միայն սերը չէ: Ուրվագծվում է Լերմոնտովի քնարերգության մի ուրիշ կարևոր մոտիվ՝ երկու անհատների կարոտը միմյանց հանդեպ և նրանց անհույս հեռավորությունը: Սիրո մոտիվն այս դեպքում երանգներից մեկն է, բայց ոչ միակը: Ավելի էական է անհատների անհույս բաժանվածությունը: Նրանք ճակատագրով դատապարտված են մենակության, որն այնպես հստակ երևում է նաև Հայնեի հայտնի բանաստեղծության թարգմանության (փոխադրության) մեջ՝ *На севере диком стоит одиноко...*⁸: Լերմոնտովն էական փոփոխություն է կատարել տեքստում, փաստորեն վերաիմաստավորել է Հայնեի բանաստեղծությունը: Հայնեի բանաստեղծության մեջ տղան՝ սոճին, երազում տեսնում է աղջկան՝ արմավենուն, սակայն նրանք հավիտյան բաժանված են: Իսկ Լերմոնտովի փոխադրության մեջ հերոսների սեռերի տարբերությունը չկա. նրանք հանդես են գալիս իբրև նույն սեռի անհատներ⁹: Դժվար չէ տեսնել այս մոտիվի և «Երագի» նմանությունը:

Ճակատագրական բաժանվածության, անհատի մենակության խնդիրը Իսահակյանի պոեզիայում ևս կարևորագույն մոտիվներից մեկն է: Բայց Լերմոնտովի բանաստեղծության սյուժեն նրան տանում է դեպի հայրենիքի համար զոհված հայդուկի թեման, որն այնքան կարևոր տեղ է գրավում Իսահակյանի ստեղծագործության մեջ: Եվ հենց այս թեման է Իսահակյան–

⁸ Այս թեմայի շրջանակներում ավելորդ չէ հիշել, որ իր փոխադրության մեջ Լերմոնտովն էլ չի նշել բնագրի հեղինակին:

⁹ Տե՛ս *Данилевский*, «Լերմոնտովյան հանրագիտարանի» հոդվածը այս բանաստեղծության մասին, էջ 330, տե՛ս նաև *М. Ю. Лермонтов*, *Собр. соч. в четырех томах, том первый*, Л., 1979, էջ 611:

նի բանաստեղծությունը սիրելի դարձնում հայ ընթերցողի համար: Ահա այսպես նրբորեն երկու բանաստեղծների տարբերությունները և ընդհանրությունները միահյուսվում են:

Եվ ևս մեկ ուրիշ՝ զուտ իսահակյանական գիծ. նրա բանաստեղծության վերջին քառատողում «Հայդուկի վրա ամպերն են լալիս» և «սև աչերը արծիվն է հանում»: Այս պատկերները հիշեցնում են «Որսկան ախպեր» և այլ բանաստեղծությունների՝ ժողովրդական ողբերից եկող հուզական մթնոլորտը: Իսահակյանը չի ավարտում խոսհնձի գեղեցիկ տեսարանով, այլ սրում է հայդուկի զոհվելու ողբերգականությունը – նա անթաղ է մնալու հայրենի դաշտում, արծիվներին ավար. միայն բնությունն է ողբալու նրա մահը: Այնինչ լերմոնտովյան ավարտը հետևողականորեն պահպանում է աշխարհիկ սիրավեպի գիծը:

2. Ալ. Բլոկի թարգմանությունը

Բայց Իսահակյանի բանաստեղծությամբ զոհված հայդուկի թեման չի ավարտվում: Շատ հետաքրքիր բան է տեղի ունենում: Ալեքսանդր Բլոկը, որն այնքան բարձր էր գնահատում Իսահակյանի ստեղծագործությունը և նրա բազմաթիվ գործեր թարգմանել է ռուսերեն, այս բանաստեղծությունը ևս թարգմանել է: Թարգմանել է իբրև իսահակյանական բնագիր, առանց նկատի առնելու ռուս բանաստեղծի «Երազը»: Լերմոնտովյան սյուժեն վերադառնում է ռուսական պոեզիա, այս անգամ արդեն ոչ միայն իսահակյանական, այլև Ալ. Բլոկի վերաիմաստավորմամբ: Եվ զարմանալին այն է, որ ո՛չ ռուս, ո՛չ հայ գրականագիտության մեջ այս փաստին ուշադրություն չի դարձվել: Այս մասին չի խոսել նաև Ալ. Բլոկը:

Բայց նախ ընթերցողին ներկայացնենք այս թարգմանությունը և համառոտ մի քանի առանձնահատկությունները:

**Во долине, в долине Сално боевой,
Ранен в грудь, умирает гайдук.
Рана – розы раскрытой цветок огневой,
Ствол ружья выпадает из рук.
Запеваает кузнецик в кровавых полях,
И, в объятьях предсмертного сна,
Видит павший гайдук, видит в сонных мечтах,
Что свободна родная страна..
Снится нива – колося под ветром звенят,
Снится – звякая, блещет коса,
Мирно девушки сено гребут – и звучат,
все о нем их звенят голоса...
Над долиной Сално туча хмуро встает,
И слезами увлажился дол.
И сраженному черные очи клюет
Опустившийся в поле орел...¹⁰**

¹⁰ Александр Блок, Собрание сочинений в шести томах, том 2, Ленинград, «Художественная литература», с. 335.

Այս տեքստն առանց վերապահումների կարելի է համարել թարգմանություն: Հայտնի է, թե Ալ. Բլոկն ինչքան բարձր էր գնահատում Իսահակյանի պոեզիան՝ նրան առանձնացնելով համաեվրոպական պոեզիայի ֆոնին: Նա ձգտել է իր թարգմանություններում հարազատորեն վերարտադրել Իսահակյանի բանաստեղծության ոգին ու ձևը: Իսահակյանի այս գործը թարգմանված է բնագրին հնարավորինս մոտ. մանավանդ եղերերգական տրամադրությունը, որն Իսահակյանի բանաստեղծության մեջ այնքան կարևոր է, պարուրում է նաև Ալ. Բլոկի թարգմանությունը: Ալ. Բլոկը զարմանալիորեն լավ է զգացել այդ տրամադրությունը: Երևի հենց այդ զացողության շնորհիվ նա բաց չի թողել Իսահակյանի բանաստեղծության ոչ մի կարևոր մանրամասն՝ և՛ ծղրիղների երգը, և՛ հովը, և՛ գերանդու փայլը... Միայն մի տող բերեմ երկու բանաստեղծություններից. ընթերցողն ինքը կտեսնի ոչ միայն հայերեն և ռուսերեն տարբերակների մոտիկությունը, այլև գեղեցկությունը. «Степном и... артом ином и зыкзном» և «Снится нива – колоса под ветром звенят»: Թարգմանությունը հնչում է իբրև կատարյալ ռուսերեն բանաստեղծություն, որը տպագրվում է ոչ միայն Իսահակյանի երկերի ռուսերեն հրատարակություններում, այլև Ալ. Բլոկի ժողովածուներում՝ նրա լավագույն թարգմանությունների շարքում¹¹:

Բայց, զարմանալիորեն, մի կարևոր կետում Ալ. Բլոկը հեռանում է Իսահակյանից (և Լերմոնտովից). ոչ թե **մեռած** հայդուկն է երազ տեսնում, այլ **մեռնող** հայդուկը (умирает гайдук; в объятиях предсмертного сна): Իսահակյանի տողը կարծես կասկածի տեղ չի թողնում՝ «Հայդուկն է ընկած մահվան խոր քնով»: Մենք արդեն տեսանք, որ Լերմոնտովն էլ գրում է՝ **спал я мертвым сном**: Ինչո՞ւ է Բլոկն այսպես վարվել: Ալ. Բլոկը թարգմանում էր տողացից: Հետևաբար կարող է երկու բացատրություն լինել. կամ տողացիի հեղինակը սխալ է թարգմանել Իսահակյանի տողը և դրանով Ալ. Բլոկին թելադրել իր ըմբռնումը, այսինքն՝ մահացած մարդը երազ չի կարող տեսնել, կամ Ալ. Բլոկն ինքն է փոխել իր համար անընդունելի ռոմանտիկական պատկերն արդեն մեռած մարդու երազի մասին: Ես հակված եմ առաջին բացատրությանը: Ալ. Բլոկի պես բանաստեղծն ավելի ուշադիր պետք է լիներ բնագրի նրբությունների հանդեպ:

Եզրակացություններ

Ալեքսանդր Բլոկի թարգմանությունը դարձել է նրա ժառանգության և ուրեմն ռուսական պոեզիայի **դասական** գործերից մեկը: Իսկ իբրև թարգմանություն մնում է Իսահակյանի, և առհասարակ հայ բանաստեղծությունից կատարված լավագույն թարգմանությունների **շարքում**:

Այսպիսով, այս դեպքում մենք ունենք բանաստեղծական նույն սյուժեի երեք մարմնավորումներ, իրարից տարբեր ազգային գույներով և ուժեղ ու ինքնատիպ՝ բանաստեղծական անհատականությունների դրսևորումներով:

¹¹ Ընթերցողին հիշեցնեմ վաղուց հայտնի մի իրողություն, որն ընդգծում է Ալ. Բլոկի թարգմանության արժեքը նրա ժառանգության մեջ: Խորհրդային Հայաստանում, քաղաքական պատճառներով, Իսահակյանի այս բանաստեղծությունը երկար տարիներ չէր տպագրվում, այնինչ Ալ. Բլոկի երկերի ռուսական հրատարակություններում միշտ տպագրվել է:

Ազատ Կ. Եղիազարյան – ունի տպագրված 12 գիրք, 5 դասագիրք, ավելի քան 100 հոդված, զբաղվում է հայկական էպոսի, Թումանյանի, Չարենցի, քսաներորդ դարի սկզբի հայկական պոեզիայի, հայ գրականության պատմության հարցերով: Գիտական հետաքրքրությունները՝ գրականության տեսություն, պատմություն, գեղարվեստական թարգմանություն:

Summary

THE DREAM OF HAYDUK: LERMONTOV – ISAHAKYAN – AL. BLOK

A Literary Sketch

Azat K. Yeghiazaryan

Key words – Isahakyan, Lermontov, Al. Blok, Armenian poetry, Russian poetry, translation, loos translation, free adaptation, romanticism, death, dream.

The article studies the three developments of the same poetic plot, that is, the death of a soldier or freedom fighter in the battlefield. In his time Lermontov wrote his famous poem "The Dream", that tells about how a dying soldier in Daghestan sees a dream about his homeland and the woman, who thinks about him. Later the poem was shifted into Armenian by Isahakyan, but here the concrete details were changed by Armenian realities. In his work an Armenian freedom fighter, i.e. a fighter for the liberation of Armenia is dying. He died in his motherland – in the valley of Salno. He sees another dream, that is, the liberated Armenia. In those dreams the national colourfulness of two poems is clearly perceived. Later the shift done by Ishakyan was translated into Russian by Alexander Blok, who highly valued Isahakyan's literary activity. Actually the poetic plot of Lermontov came back to Russia in the form of interpretation done by Isahakyan. But this wasn't strangely enough perceived both by Blok and literary critics.

СОН ГАЙДУКА: ЛЕРМОНТОВ – ИСААКЯН – АЛ. БЛОК

Литературоведческий этюд

Азат К. Егиазарян

Ключевые слова – Исаакян, Лермонтов, Ал. Блок, армянская поэзия, русская поэзия, романтизм, перевод, вольный перевод, переложение, смерть, сон.

В статье рассматриваются три разработки одного поэтического сюжета – гибели воина или гайдука на поле брани. В свое время Лермонтов написал свое известное стихотворение «Сон» о том, как погибающий в Дагестане военный видит сон о своей родной стороне, о женщине, которая думает о нем. Стихотворение было потом переложено Исаакяном на армянский, но в этом переложении конкретные детали были заменены армянскими реалиями. У него погибает армянский гайдук – боец за свободу Армении. Он погибает на своей родине – в долине Сално. Он видит другой сон – свободную Армению. В этих снах ясно чувствуется национальный колорит двух стихотворений. В дальнейшем переложение Исаакяна перевел на русский язык Александр Блок, который высоко ценил творчество Исаакяна. Фактически поэтический сюжет Лермонтова вернулся в Россию в интерпретации Исаакяна. Но этого странным образом не заметили ни Блок, ни литературоведы.

REFERENCES

1. **Aleksandr Blok**, *Sobranie sochinenij v shesti tomah*, tom 2, "Xudozhestvennaa Literatura", Leningrad, 1980 (**in Russian**).
2. **Avetiq Isahakyan**, *Ye'rkeri liakatar zh'oghovac'u, Ye'rev'an*, "Gitut'yun", 2003 (**in Armenian**).
3. **Avik Isahakyan**, *Avetiq Isahakjanə ev rus grakanut'yunə*, Erev'an, "Gitut'yun", 1984 (**in Armenian**).
4. **Lermontovskaja Enciklopedija**, Moskva, "Sowetskaja Enciklopedija", 1981 (**in Russian**).
5. **M. Ju. Lermontov**, *Sobranie sochinenij v chetyryx tomah*, tom pervij, "Nauka", Leningrad, 1979 (**in Russian**).